

ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ

ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՅԵՏԻՈՐՅՐԴԱՅԻՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Հասարակական – քաղաքական փոփոխությունները, հայտնի է, բոլորից շատ անդրադառնում են բառապաշարի վրա առաջ բերելով բառիմաստների տարբեր տեսակի փոփոխություններ: Մասնավորապես վերը նշված, ինչպես նաև տնտեսական կացութաձևի փոփոխությունների հետևանքով բազմաթիվ բառեր փոխել են իրենց գնահատողական երանգները, բազմաթիվ բառեր անցել են հնաբանությունների շարքը, շատ բառեր հնաբանություններից իմաստային այս կամ այն փոփոխություններով վերադարձել են ակտիվ բառաշերտ: Դիտարկենք այս դեպքերը:

Մամուլը պարզապես հեղեղված է գնահատողական երանգի բառաշերտի բառերի և բառակապակցությունների գործածություններով: Հասարակական – քաղաքական ոլորտի բառաշերտը, որն առավելապես առկա է մամուլում, աչքի է ընկնում հատկապես գնահատողական երանգավորում ունեցող բառերի առատությամբ: Քաղաքական պայքարը իր կնիքն է թողնում բառերի իմաստների վրա տարբերակելով դրանք դրական և բացասական տեսակների: Խորհրդային մամուլում այս կարգի բառերը ընդհանուր համագործածական բառերից հետո ամենաշատ գործածվողներն էին: Խորհրդային պետության բարեկամները, նրանց գործունեությունը, խորհրդային ապրելակերպին բնորոշ իրողությունների անվանումները, ԽՄԿԿ հետ առնչվող բոլոր բառերն օժտված էին ընդգծված դրական երանգավորմամբ: Գիտենք, որ իր գոյության տարբեր տարիներին տարբեր բառեր էին շրջանառվում մամուլում իբրև դրական երանգավորում ունեցող բառեր: Այսպես *բոլշևիկ, կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիզմ, ստախանովական, հարվածային, աշխատանքային հերթափոխ, եղբայրություն, ժողովուրդների ընտանիք, վառ հոգատարություն, բանվորների և գյուղացիների անխախտ դաշինք, կուսակցականների և անկուսակցականների անխախտ բլուկ, կարմիրբանակային, լուսավոր ապագա, կուսակցության հանդեպ խորը երախտագիտություն, անսահման նվիրվածություն, անօրինակ սխրանք, կուսակցականի բարոյական կողոպտ* և այսպիսի հազարավոր բառեր: Նշենք, որ այս բառերը ռուսերենից պատճենումներ են, և բոլորն էլ անխտիր ունեցել են ընդգծված դրական երանգավորում: Այսօր այդ

բառերը հասարակական մտածողության փոփոխության արդյունքնուն կամ անցել են հնաբանությունների շարքը, կամ գործածվում են բացասական երանգավորմամբ: Դրանց մի մասը գործածվում է արհամարհական, հաճախ հեզմական նշանակությամբ: Այսպես հետխորհրդային տարածքներում նախկին եղբայր - ազգությունների համայնապատկերում այսօր ընդգծված արհամարհական երանգավորում ունեն *հավասարություն, եղբայրություն, ժողովուրդների բարեկամություն* բառերը: Կամ նույնանման երանգավորմամբ են գործածում *մեծ եղբայր* բառակապակցությունը: Արժեզրկված է *ինտերնացիոնալիզմ* բառը, թեև կուսակցություններից մեկը ՀՅԴ - ն պահպանել է այդ բառի դրական նշանակությունը, քանի որ ինքն էլ դեռ գոյություն ունեցող Համաշխարհային Ինտերնացիոնալի անդամ է: Նախկինում *Հոկտեմբերյան հեղափոխություն* ընդգծված դրական երանգավորում ունեցող բառակապակցությունը վերածվել է *հոկտեմբերյան հեղաշրջում* կապակցության: *Հոկտեմբերիկ, կոմերիտական* բառերը հիմնականում չեն գործածվում կամ գործածվում են հեզմական շեշտադրմամբ: *Պիոներ* բառն էլ գործածվում է իր նախնական լատիներենից եկած իմաստով՝ առաջամարտիկ և որպես դրա հպարտ կիրառություն կրում է բուրժուական ապրելակերպի ատրիբուտ գիշերային ստրիպտիզ ակունքներից մեկի անվանումը: Չկա նաև *ավանգարդ* բառը (նաև նույնանուն երիտասարդական թերթը), որը ժամանակին առնչվում էր կոմերիտիությանը: *Քազե* բառի փոխաբերական իմաստով նախկինում անվանվել են պատերազմի հրծիգները, և նրան հակադրվել է *աղավնի* բառը (խաղաղության աղավնի): Այդ իմաստներով բառը գործածվում է նաև մերօրյա մամուլում *«ես ոչ քազե եմ, ոչ էլ աղավնի»* (Առավոտ): Այժմ այդ բառով անվանվում են ուսանող - երիտասարդների խմբերը, որոնք հավաքներ են անցկացնում և օժանդակում կուսակցություններին:

Բազմաթիվ են այն բառերը, որոնք անցել են հնաբանությունների շարքը և սպասում են ոճական նպատակներով կիրառվելուն: Դրանցից են *մարքսիզմ, լենինիզմ, մատիզմ, ստալինիզմ, տրոցկիզմ, զարգացած սոցիալիզմ, կոլտնտեսություն (կոլխոզ), սովետական տնտեսություն (սովխոզ), անձի պաշտամունք, լճացման տարիներ, արագացում, նավթային ռուբլիներ, դեմոկրատական ցենտրալիզմ, խաղաղ գոյակցություն, պլան, պլանների գերակատարում, հնգամյակը՝ չորս տարում, սոցիալիստական մրցություն* և այլն:

Խորհրդահայ մամուլը լի էր բացասական երանգավորում ունեցող բառերով և բառակապակցություններով, որոնք վերաբերում էին խորհրդային պետության թշնամիներին, հակառակորդներին գրեթե բացառապես արտաքին աշխարհին: Դրանք թե հասարակական – քաղաքական տերմիններ էին և թե

հատկանիշություն ցույց տվող բառեր: Դրանք այսօր էլ չեն գործածվում բացասական երանգավորմամբ. կամ դրական են, կամ առնվազն չեզոք:

Այսպես *լիբերալ* բառը թե իր ածականական և թե գոյականական իմաստներով ունեցել է բացասական նշանակություն *անհարկի ազատականություն* իմաստով: Այժմ ունի դրական երանգավորում և գործածվում է ինչպես փոխառյալ, այնպես էլ հայացված *ազատական* բառով: Այդ բառով կան կուսակցությունների անվանումներ՝ *Չայաստանի ռամկավար - ազատական կուսակցություն* և *Լիբերալ - դեմոկրատական կուսակցություն*:

Իմպերիալիզմ բառով բնորոշվել է կապիտալիզմի բարձրագույն ստադիան, և առօրյա պատկերացումներում բառն ունեցել է ընդգծված բացասական երանգավորում: Բառը գրեթե չի գործածվում. իմպերիալիստական բառին փոխարինել է *զարգացած շուկայական տնտեսություն ունեցող* ժամանակահունչ կապակցությունը: Իսկ սհա բառի հայացված տարբերակը՝ կայսերապետություն, գործածվում է հենց ԽՍՀՄ – ը բնութագրելու համար: Ծիշտ նույն ձևով *ամբողջատիրական* (տոտալիտար) եզրույթը նախկինում գործածվում էր այլ պետությունների բնութագրման համար: Այսօր մամուլում այդպես բնութագրվում է նույն ԽՍՀՄ- ը:

Սիջնադարյան քաղաքագետ Մաքիավելու անունով ստեղծված մաքիավելիզմ տերմինը խորհրդային մամուլում գործածվել է միայն ու միայն բացասական երանգավորմամբ և հասկացվել է որպես ամեն կերպ իշխանության հասնելու մոլուցք: Այսօր այն ոչ միայն բացասական չէ, այլև համատարած մեջբերումներ են արվում մամուլում այդ ուսմունքից:

Նախկինում նույնպես կար *շուկա* բառը, սակայն չէր խրախուսվում այդ բառի գործածությունը իբրև առանձին տնտեսական կատեգորիա. պատահական չէ, որ բառարաններում որպես հիմնական իմաստ նշվում էր այն տեղը, որտեղ գյուղմթերքներ են վաճառվում<sup>1</sup>: Այստեղից *կոլտնտեսային շուկա, ժածկած շուկա*: Այդ բառի օտարաբան ձևը՝ *բազար*, արհամարհական երանգ ուներ (*բազար անել, բազար դարձնել, բազարի վերածել, բազարչի*): Չեխոստրիդային շրջանում բառը իր հիմնական իմաստով նշանակում է տնտեսական կատեգորիա արտադրական յուրատեսակ հարաբերություններ, ապրանքների սպառման ոլորտ իր կապակցություններով *զարգացած շուկա, սպառման շուկա, ֆինանսական շուկա, համաշխարհային շուկա, շուկայական հարաբերություններ, շուկայական գներ, շուկայական տնտեսություն, շուկայի պահանջներ, շուկայի որոնումներ (փնտրտուք)* և այլն:

<sup>1</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 4-րդ:

*Ամորալի* էին այն բոլոր դատավարությունները, որոնք իրականացվում էին ԽՍՀՄ բարեկամների նկատմամբ: *Պրչակ* էին բոլոր նրանք, ովքեր գրում էին ընդդեմ ԽՍՀՄ – ի: *Ճախու, կեղծավոր, շողոմ, քսու* հատկանշային բառերը նույնպես վերաբերում էին նախկին պետության թշնամիներին: Հատկապես տարածված էր *փարիսեցի(ներ)* բառի գործածությունը, քաղաքական փարիսեցիություն: Սուրբ գրքից ավանդված նշանակությամբ:

Բացասական երանգավորում ունեցողներից նշենք նաև *բիրտ ուժի քաղաքականություն, հանցավոր ռեժիմ, խունտա, հիստերիա(ռազմական, քաղաքական), մանկլավիկ, մարիոնետ, վախի իշխանություն* և նման բազում այլ բառեր:

Հասկանալի է, որ այս կարգի բառեր այլ պետությունների հասցեին կարող էր թույլ տալ ԽՍՀՄ – ի պես հզոր երկիրը: Սերօրյա մամուլում այդ բառերը նույնպես լայնորեն գործածվում են, միայն թե ոչ օտար երկրների քաղաքականությունը բնութագրելու նպատակով, այլ սեփական երկրի ներսում: Իշխանության համար մղվող պայքարի ներկայիս հայաստանյան քաղաքական գործիչներից շատերի լեզվամտածողության անբաժանելի տարրերն են: Վերը նշված բառերին կարելի է ավելացնել *ամբարտավան, անպատկառ, շողոմ, անագնիվ, ապօրինություն, ավազակային, դատապարտելի, զրպարտչական, թշնամական, լկտի, հանցավոր, ստոր, ստորաքարշ, ցինիկ* և այլ նման բառեր և բառակապակցություններ, որոնց մերօրյա մամուլում ցանկացած պահի կարելի է հանդիպել՝ ներհայաստանյան իրողությունները բնութագրելիս: «Իրավունք» թերթի ընդամենը մեկ հոդվածում գործածված են հետևյալ բառերը *կոկորդ կրծել, ատելություն, թշնամություն, չարություն, նախանձ, իրար միս ուտել, ջայլամի քաղաքականություն, զրպարտանքներ, ստահող տեղեկություններ, զազրախոսություն, զրախոսություն, սադրանք, թյուրիմացություն, մաֆիա, կեղծիք, արատավոր հատկանիշներ, թքել են, կիսագրագետ նախարար, մարդատյաց, շիզոֆրենիա, բոլորի ոռնալը, դախլայատեր, մուղամչի, ռոմակի կաղկանձ, լոտոյով մեքենա շահած մուտանտներ, բռնարարքներ, ապօրինություններ* (1090): Դժվար է ասել, թե այս կարգի բառերը որտեղ էին շատ խորիրդահայ մամուլում ուղղված էր համաշխարհային իմպերիալիզմի դեմ, թե մերօրյա մամուլում՝ ուղղված հայրենի իշխանությունների կամ ընդդիմության դեմ: Ի դեպ, նույն *հայրենի* բառը հեզմական նշանակությամբ իշխանական մամուլում կարելի է հանդիպել *հայրենի ընդդիմություն*, իսկ ընդդիմադիր մամուլում՝ *հայրենի իշխանություն* կապակցություններին:

Անդրադառնանք նաև այն բառերին, որոնք ոչ վաղ անցյալում գտնվել են հնաբանությունների շարքում և այսօր երկրորդ կյանքն են ապրում քանի որ հասարակական գիտակցության մեջ փոխվել է վերաբերմունքը այդ

անվանումները կրող երևույթների նկատմամբ: ԽՍՀՄ փլուզմամբ վերացան նաև այդ պետության կառավարման օրգանները, և ստեղծվեցին նորերը, որոնցից շատերը կոչվեցին նախկինում գործածված բառերով: Այսպես, Խորհրդային Հայաստանը բաղկացած էր *չրջաններից*, այժմ վարչատարածքային միավորներն անվանվում են *մարզեր*: Նախկինում կար այդ բառը որպես ռուսերեն *օբլաստ* բառի համարժեք: Սակայն, գիտենք, բառը մեզանում եղել է ավելի վաղ, երբ Հայաստանը ինքը գտնվում էր *մարզի* կարգավիճակում, որի գլուխ կանգնած է եղել *մարզպանը*: Այսօր մարզերի ղեկավարներին անվանում են *մարզպետ*: ՀՀ – ում տեղական ինքնակառավարման օրգանները անվանվել են նախկին անվանումներով: Այսպես, *համայնք* բառը նախկինում գործածվում էր այլ երկրներում հայահոծ ընդհանրությունները անվանելու համար: Բառը վերականգնվել է իբրև տարածքային – վարչական միավորի անվանում *համայնք համայնքապետ, թաղ՝ թաղապետ, գյուղ՝ գյուղապետ*:

*Ավագանի* բառը դարձյալ դիտվել է իբրև պատմաբան «բարձր ազնվականների դաս, պալատական մեծամեծեր» նշանակությամբ<sup>2</sup>: Այժմ բառը ակտիվ բառաշերտում է՝ ղեկավարող օրգան նշանակությամբ՝ *մարզի համայնքի ավագանի*:

*Նախագահ* բառը խորհրդային շրջանում ունեցել է «1) ժողովը ղեկավարող անձ, 2) որոշ հիմնարկների՝ կազմակերպությունների ղեկավար, 3) կառավարության գլուխ կանգնած անձ» նշանակություններով<sup>3</sup>: Այսպես, *կոլտնտեսության նախագահ, շրջգործկոմի նախագահ, մինիստրների խորհրդի նախագահ, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ* և այլն: Այսօր այդ բառը գործածվում է պետության առաջին դեմքի պաշտոնի անվանումով *պրեզիդենտ* փոխառության փոխարեն *ՀՀ նախագահ, ԱՄՆ նախագահ, ՌԴ նախագահ*: Այստեղից մի շարք նորիմաստ կապակցություններ *նախագահի աշխատակազմ, նախագահի վերահսկողական ծառայություն, նախագահի ապարատ, նախագահական մտավայր* և այլն:

Շարունակելով թեման՝ նշենք, որ նախկին պետությունում օրենսդիր մարմինը կոչվում էր *Գերագույն խորհուրդ*: Մի որոշ ժամանակ այդպես էր կոչվում նաև անկախ Հայաստանում, սակայն հետագայում վերանվանվեց *Ազգային ժողով* դարձյալ նախկինում գործածված անվանում: Գործադիր մարմինն անվանվում էր *Մինիստրների խորհուրդ*, այժմ այն կոչվում է *կառավարություն*, իսկ նրա գլուխ կանգնած անձը *վարչապետ*: Երբեմն էլ բնորոշվում է *կաբինետ* փոխառյալ բառով, որը նախկինում գործածվում էր բացասական երանգավորմամբ: Այսօր հանդիպում ենք *բազրատյանական*

<sup>2</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1-ին:

<sup>3</sup> Նույն բառարանը, հատոր 4-րդ:

կաբինետ, մարզարյանական կաբինետ բառակապակցությունների: Իսկ ահա նախարար պատմաբանը, որը նշանակել է «իին Չայաստանում ընդարձակ կալվածքի տեր, մեծ, զրեթե անկախ իշխան, տանուտեր»<sup>4</sup>, այժմ գործածվում է մինիստր փոխառության փոխարեն իբրև պետական նշանակություն ունեցող առանձին ճյուղի, Ղրղոսի ղեկավար կապի և տրանսպորտի նախարար:

Ոստիկան բառով անվանվել են բուրժուական երկրներում «գոյություն ունեցող հասարակարգի անվտանգությունն ապահովող և իշխող դասակարգի հասարակական կարգերը պաշտպանող պետական օրգան և նրա ծառայողները» նշանակությամբ<sup>5</sup>: Ի տարբերություն խորհրդային միլիցիայի, որը «հսկում է հասարակական կարգի պահպանության, պետական, հասարակական, անձնական գույքի ապահովության և փողոցային երթևեկության կարգավորման վրա»<sup>6</sup>: Երրորդ հանրապետությունում նախընտրվել է ոստիկան բառը:

Ղարաբաղյան պատերազմի ընթացքում նորից ակտիվ բառաչերտ մտավ ֆիդայի բառը՝ իրենով կազմված բառակապակցություններով՝ ֆիդայական ջոկատներ, ֆիդայական պատերազմ և այլն: Ոչ պաշտոնապես վերականգնվեց սպարապետ բառը, որով մեծարվեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը:

Նոր կյանք ստացած բառերից նշենք *ցեղակրոն* բառը (*նժդեհյան ցեղակրոնություն, ցեղակրոն մտածելակերպ, ցեղակրոն շարժում* և այլն):

Ամփոփելով նշենք հետևյալը:

1. Հասարակական – քաղաքական փոփոխությունները իՍՀՄ փլուզումը, ՀՀ ձևավորումը, տնտեսական կացութաձևի փոփոխությունները անմիջականորեն ազդել են բառերի վրա՝ առաջ բերելով բառերի իմաստների փոփոխություններ:
2. Այդ փոփոխություններն արտահայտվել են ա) գնահատողական երանգի բառաչերտի բառերի երանգավորումների փոփոխություններով. բացասական երանգավորմամբ բառերից շատերը վերածվել են դրականի կամ առնվազն չեզոքի և հակառակը, բ) ակտիվ բառաչերտից պասիվի անցմամբ և հակառակը, գ) նախկինում գոյություն ունեցած որոշ բառերի վերագործարկմամբ:
3. Այս փոփոխությունները հնարավոր են դարձել այդ անվանումները կող երևույթների նկատմամբ հասարակական գիտակցության վերափոխության պատճառով:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն բառարանը, հատոր 4-րդ:

<sup>6</sup> Նույն բառարանը, հատոր 3-րդ: